

ՀԻԴՐՈՆԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱԶԱՆ, իջ-
վածք, որ գտնվում է բարձրացած խոշոր
ծալքաբեկորների կամ լեռների միջև և
կազմված է ջուր պարունակող տարահա-
սակ շերտավոր ապարներից: Հ. ա-ի օրի-
նակ են Դնեպրա-դոնեցկյան, Մերձկաս-
պյան իջվածքները: Հ. ա-ներն ընդգր-
կում են ոչ միայն արտեզյան, այլ նաև
գրունտային ավազանները. ավելի լայն
տերմին է, քան *արտեզյան ավազանը*:

ՀԻԴՐՈՆԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹ,
դաշտային հետազոտությունների համա-
լիր, որ կատարվում է *հիդրոերկրաբանա-
կան քարտեզների* կազմման և տարածքի
ընդհանուր հիդրոերկրաբանական պայ-
մանների գնահատման նպատակով: Հ. հ-ի
ընթացքում ուսումնասիրվում են ջրաբեր
հորիզոնները կազմող ապարները, հա-
մալիրները և զոնաները, նրանց ծծանց-
ման հատկանիշները, ստորերկրյա ջրերի
ճնշման մեծությունը, տիպերը, որակը և
ռեժիմը: Բնութագրվում են հիմնական հիդ-
րոերկրաբանական պարամետրերի ար-
ժեքները, գնահատվում երկրաբանական,
գեոմորֆոլոգիական, հիդրոլոգիական,
կլիմայական և այլ գործոններ, որոնք ազ-
դում են ստորերկրյա ջրերի սնման և ձևա-
վորման վրա: Հ. հ-ի խնդիրները փոխ-

վում են՝ կախված նրա մասշտաբից և նպատակներից: Փոքր մասշտաբի Ն. հ. (1:1000000—1:500000) կատարվում է հիդրոտերկրաբանական տեսակետից թույլ ուսումնասիրված շրջաններում ակնարկային հիդրոտերկրաբանական քարտեզներ կազմելու համար, ապարների ջրատարություն և ստորերկրյա ջրերի որակի ընդհանուր գնահատման նպատակով: Միջին մասշտաբի Ն. հ-ի (1:200000—1:100000) դեպքում կազմվում են պետական (ընդհանուր) հիդրոտերկրաբանական քարտեզներ, ուսումնասիրվում ապարների ջրաբերությունը, ստորերկրյա ջրերի որակը և ռեժիմը, ստորերկրյա և մակերեսային ջրերի գործունեության հետ կապված երկրաբանական երևույթները: Խոշոր մասշտաբի Ն. հ. (1:50000 և ավելի խոշոր) կատարվում է տեխ. և բանվորական նախագծման փուլերում հատուկ խնդիրների լուծման համար: Խոշոր մասշտաբի Ն. հ-ի ընթացքում քարտեզագրվում են ջրատար հորիզոնները, գոնաները, շերտերը, ոսպնյակները: Միջին և խոշոր մասշտաբի հանույթը գուգակցվում է հորատման աշխատանքներով, աղբյուրների դեբիտի չափումներով, ստորերկրյա ջրերի մակարդակի և քիմ. բաղադրության դիտարկումներով: Կիրառվում են նաև երկրաֆիզիկական և աերոմեթոդներ: